

## Հարց

Ո՞ր դեպքերում է Հանձնաժողովն իրավասու վերանայել ջրային համակարգի բնագավառի սակագները:

## Պատասխան

**Ջրային համակարգ`** որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը.

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել գործող սակագինը և սահմանել նոր սակագին` ելնելով ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից: Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձի կողմից ներկայացված հայտի հիման վրա, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ: Սակագների գործողության ժամկետը 1 տարուց պակաս չի կարող լինել: Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո: